

ՄԻԻՔԱՐ ՍԵՖԱՍՏԱՑԻՆ
ԵՒ 18ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԾՆՆԴԻՅԱՆ ՅՈՈՒՄՆԱԿԻ ԱՌԹԻԻ

Հայոց գրական կեանքի բուն վերանորոգումը, որ սկիզբ է առնում 17րդ դարի վերջերից, 18րդ դարում ստանում է զարգացման ծրագրային բնույթ եւ ընթացք: Դա նոր ժամանակների, ընդհանուր ոգու ազդեցութիւնն էր, որ կրում էր իր վրայ ամէն մի կենսունակ ազգ: «Նմանութիւնք առաքեալներին, — գրում է Խ. Աբովեանն, իր խօսքն ուղղելով ժամանակակից Հայ գործիչներին, — նմանութիւնք նրանց ոչ թէ բարձր գիտութեամբ, որ դեռեւս անօգտակար է հասակով մանուկ մեր ազգի համար. տանք նրան զուտ... մարդկային կանոններ, ուղղութիւն եւ մենք կը մօտենանք երկնային արքայութեանը... միթէ այդպէս չե՞ն արել Սոկրատն ու Կոնֆուցիոսը, միթէ մեծ Մխիթար Սեբաստացին... այդպէս չի՞ դրել ամբողջ գիտական աշխարհում յայտնի վեհերիկի, այժմեան հսկայական... միաբանութեան հիմքը»: «Զուտ կանոններ», «ուղղութիւններ» գրական, գիտական, տեսական օրէնքներ, ծրագրեր — այս հիմունքներով են նոր դարերում իրենց ազգային լուսաւորութեանն ու քաղաքակրթութեանը հասել պետականութիւն ունեցող արեւմտաեւրոպական երկրները եւ Ռուսաստանը, եւ այս հիմունքներով պիտի առաջ մղէր իր հոգեւոր կեանքի վերաշինութիւնը պետականութիւնից զրկուած (հայրենիքից հողմահալած, հայրենիքում հողմածեծ) Հայ ժողովուրդը՝ 18րդ դարում: Լուսաւորեալ Եւրոպայի եւ Ռուսաստանի ու հայութեան պատմական կեանքի ընթացքի հետ կապուած այս զուգահեռ բնական է եւ ճիշտ: սակայն կան իրապէս անհամեմատելի եւ յճուական նշանակութիւն ունեցող այնպիսի երեւոյթներ, որոնք չի կարելի անտեսել: Եւրոպան եւ ապա Ռուսաստանը իրենց գրական-լուսաւորական ծրագրային պայքարը առաջ էին մղում սեփական,

1. Խ. ԱԲՈՎԵԱՆ, Երկեր, հտ. 7րդ, Երեւան 1956, էջ 173-174:

խեցին, Մխիթար Սեբաստացին, Պաշտոնը Էրզրումեցին, Յակոբ Նախանը, Սիմէոն Երեւանցին, Ղուկաս Կարնեցին, Պաղտատար Դըպիրը, Պետրոս Ղափանցին, Միքայէլ Չամչեանը, Գէորգ Պալատեցին եւ այլք՝ կրօնա-եկեղեցական եւ աշխարհիկ առաջադէմ կրթութեան, գրական-լուսաւորական շարժման մարդերում: Նկատենք նաեւ, որ այս շարժմանը արդէն որոշակի նպաստ էին բերում արտաքին աշխարհում տնտեսապէս ամրապնդուած ու զարգացած հայ առաջադէմ վաճառականներն ու արհեստավորները, այսպէս կոչուած վաճառականական մտաւորականութիւնը:

* * *

18րդ դարի վերանորոգութեան շարժման ոչ սակաւաթիւ գործիչների մէջ ազգային-գրական-մշակութային լայնահուն գործունէութեամբ ու իր ունեցած քաջառիկ դերով առանձնանում է Մխիթար Սեբաստացին:

Այստեղ, բնականաբար, չենք ներկայացնելու Մ. Սեբաստացու դժուարադնաց ու ցաւաշատ կեանքի պատմութիւնը եւ ոչ էլ՝ նրա բարոյական ու իմացական առանձնաշնորհ, մեծ անհատականութիւնը: Չենք ներկայացնելու նրա բազմաբովանդակ հանրադիտական բնոյթի ստեղծական ժառանգութիւնը, ինչպէս նաեւ նրա հիմնադրած դպրոցի օտար հողում երբեւէ գոյութիւն ունեցող այնքան կենսունակ, այնքան դիտական ու ազգային հաստատութեան 275ամեայ բեղնաւոր կեանքի պատմութիւնն, այս կամ այն չափով: Մեր խնդիրն է ցոյց տալ ներդաշնակութեան ու ընդհանրութեան մի քանի դժեր միայն, որոնք գոյութիւն ունեն Մ. Սեբաստացու գործունէութեան եւ 18րդ դարի վերանորոգող շարժման վերելում նշուած խնդիրների միջեւ, անդրադառնալ այն էական հարցերից ոմանց, որոնք Մ. Սեբաստացուն դարձնում են այդ շարժման առաջամարտիկներից մէկը, թերեւս՝ գլխաւորը: «Զի ճառագայթ այսորիկ դեռեւս առ մեզ ոչ է հասեալ եւ ոչ է ծանուցեալ» գրում է Մ. Սեբաստացու մասին 17-18րդ դարերի նշանաւոր հանրագէտ Պաշտոնը Էրզրումեցին²: «Տասն եւ ութերորդ դարու գործակատարութիւնը - նկատում է Միքայէլ Նալբանդեանը - հայկական դպրութիւնը վերակենդանացնելու համար, կատարուեցաւ Մխիթար Սեբաստացու ձեռքով... այդ երեւելի մարդը արժանի է մեր առանձին ուշադրութեան եւ նորա վաստակքը իրաւունք ունի պահանջելու մեզանից մի անկողմնապահ, սառն քննութիւն եւ արդարաւսու հատուցում»: Պաշտպանելով Մ. Սեբաստացուն ծայրայեղ կրօնականների յարձակումներից, Մ.

2. Հ. Մ. ՉԱՄՉԵԱՆ, Պատմութիւն Հայոց, հտ. 9, Վենետիկ 1784, էջ 767:

Նալբանդեանը շարունակում է. «Վաղուց արդէն հասկացել էր Մխիթարը, թէ որպիսի ցած դրութեան մէջ էր իւր ազգը իմացականի մասին... նա հայկական դպրութեան եւ լուսաւորութեանը գոհեց իւր հանգստութիւնը, իւր անձը մատնեց հազարաւոր նեղութիւնների, բամբասանքի եւ հալածանքի...: Այս բոլոր գոհաբերութիւնք նա յանձն էր առել հայկական դպրութեան համար»³: «Մենք եկամք հասանք մի իսկապէս մեծ մարդու - գրում է Լէօն՝ Մ. Սեբաստացու մասին - որը մի ամբողջ դարագլուխ է կազմում... Մխիթարի դերը հայոց պատմութեան մէջ անհունապէս մեծ է: Նա դժգոհ էր հայրենի երկրի կեանքից, եւ ահա ինչն է այդ մարդու արժանիքներից մէկը: Վստահ կարելի է ասել - շարունակում է Լէօն - որ մի ամբողջ դար, որ գիտութիւն եւ լոյս էր մատակարարում, մեր մտաւոր զարգացման պատմութեան մէջ՝ կարելի էր եւ պէտք է անուանել Մխիթարեան դար: Այդ մեծ դարացի հիմքը դրուեց Մխիթարի ձեռքով եւ նրա ծրագրով, նրա աւանդներով է գործում մինչեւ այսօր»⁴:

Սեբաստացին այն առաջին գործիչներից մէկն է, որ դժգոհ լինելով հայրենի իրականութիւնից, ճիշտ գիրքորոշուեց դարի, ժամանակի հայութեան համար ստեղծուած իրադրութեան մէջ. ըմբռնեց, որ այդ հանգամանքներում «մի ազգի պահողը նրա լեզուն ա ու հաւատը», բարձրացրեց ազգի եւ եկեղեցու շահերի միասնութեան, նրանց համատեղ պաշտպանութեան խնդիրը եւ ապա այդ գաղափարի իրականացման համար մղուող պայքարը դրեց գիտական ու գործնական, «ծրագրային հիմքերի վրայ»: «Որքան կարեւր, եւ որչափ կենդանի եմ - գրում է Մ. Սեբաստացին 1733 թուականին իր հրատարակած «Աստուածաշնչի» յիշատակարանում - պիտի ջանամ աշխատիլ վասն հոգեւորի օգտի եւ շահաւէտութեան ազգի իմոյ, թէեւ երբեմն վասն նշմարտութեան հաւատոյ իցեմ յոմանց ի նոցանէ խոտեցեալ եւ կամ միշտ խոտիցիմ»⁵: «Քանի անգամ - գրում է Մ. Սեբաստացին 1736 թ. կարնոյ առաջնորդ Իսահակ վարդապետին ուղղուած իր նամակում - որ կը լսեմ կամ գրեց ձեռքով կը տեսնեմ թէ մեր ազգէն ոմանք կը ջանան եւ կը փափագին գիտութեանց հետամուտ ըլլալ - նոյնչափ եւս կ'արծարծի հոգիս: ... Ո՛ր է թէ տեսնէի ազգս եւ անոր նորարարոյ վարդապետները գիտութեանց, իմաստնից եւ կրթութեան մէջ զարգացած եւ նշմարտութիւնը մանչնալու փափագով վառուած, ոչ միայն բնութեան, այլ նաեւ հաւատոյ իրաց մէջ եւ այնպէս գոհութեամբ մեռնէի»⁶: «Թող Աստուած տայ - գրում է Մ. Սեբաստացին մի այլ նամակում - որ ես կարո-

3. Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Երկեր, հտ. 2րդ, Երեւան 1956, էջ 4 եւ 187:

4. ԼԷՕ, Հայոց Պատմութիւն, հտ. 3րդ, Երեւան 1946, էջ 984:

5. Աստուածաշունչ, Վենետիկ 1733, էջ 1279:

6. Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ, Վարդ Մխիթարայ, Վենետիկ 1932, էջ 357-8:

մանկավարժի լեզուով ու քնքշութեամբ բացատրում է գրական աշխարհաբար լեզուն սովորելու նրբութիւնները, զգուշացնում է արտասանութեան կեղծ շինծու ձեւերից, անուշադիր, համր դրավար-թութեան վնասներից: «Ընթերցողն պարտի ջանալ, զի կէտ առ կէտ եւ ըստ օրինի ընթեռնուցու, այսինքն այնպէս եւ այնու եղանակաւ, ըստ որում կերպի խօսի ընդ ընկերին ի զրուցատրութեան... որք անհոգաբար ընթեռնուն կամ եւ առանց զգուշութեան եւ կամ յամր դրավարութեամբ՝ կորուսանեն զհամեղութիւն շարադրութեանց եւ վնասեն դիւրիմացութեանց բանիցն... վասն զի — շարունակում է նա — ամենից իրաց բարեաց սկիզբն դժուարին է, բայց վախճան՝ լի պտղովք, բարեօք եւ անուշիւք»¹⁰: Աշխարհաբար այս դասագրքով Մ. Սեբաստացին մտերմական կապի մէջ է մտնում մանուկ սերնդի հետ, հայրաբար զրուցում է, խրատում նրանց, յորդորում է սէր դէպի գրական աշխարհաբարը, դէպի ուսումն ու կրթութիւնը՝ առհասարակ:

Մ. Սեբաստացու լեզուաշինարարական երկրորդ զուգահեռ քայլը հետապնդում էր թրքախօս հայութեանը հայերէն սովորեցնելու նըստակը: Հայերին հայերէն սովորեցնել թուրքերէնի միջոցով, սա իւրովի ողբերգութիւն էր հայ մտաւորականի համար: Եւ ահա Մ. Սեբաստացին իր իսկ կազմած աշխարհաբար հայերէն քերականութիւնը փոխադրում է թուրքերէնի. «Բայց մինչ նոքին, որոց պիտոյ էր կիրառումն սորին առ ի ուսանիլ զհայկական լեզու, գիտէին միայն զլեզու տաճկական, ստիպեցայ զի զխրատսն այսորիկ առաջնոյ զրգկան, այսինքն Դրան Քերականութեան դարձուցանիցեմ ի լեզու տաճկական եւ հանդէպ անուանց հոլովեցելոց եւ բայից լծորդեցելոց ղնիցեմ զբառս տաճկականս, որպէս եւ տեսանի»¹¹: Քերականութիւնը հաղորդում է «զփոքրիկ բառարանիկ մի» հայերէն-տաճկերէն բացատրութեամբ:

Մ. Սեբաստացու լեզուա-շինարարական երրորդ խոշոր քայլը՝ հին գրոց լեզուի կարգաւորումն էր: Այդ նպատակով 1730 թուականին նա տպագրում էր «Քերականութիւն դրաբար լեզուի հայկազեան սեռի» ստոճար դասագիրքը: 1736 թուականին տպագրում էր «Աստուածաշունչը»՝ եօթ այլ լեզուների եւ հայերէն հին ձեռագիր օրինակների համեմատութեամբ, միաժամանակ շուրջ 25 տարի աշխատում էր «Հայկազեան բառարանի» վրայ, որը լոյս էր տեսնում 1749 թուականին՝ իր մահից 3 շաբաթ յետոյ: Եթէ Մ. Սեբաստացին ուրիշ ոչինչ արած չլինէր, ապա հոյակերտ, անօրինակ եւ անծերանալի «Հայկազեան բառարանը»՝ 18րդ դարի հայ գրական կեանքի առաջին

10. Անդ:

11. ՄԽ. ՍԵԲԱՍՏԱՅԻ, ԴՈՒՆԻ ԲԵՐԱԿ..., էջ 4:

ամենամեծ կոթողը բաւական էր, որպէսզի անմահանար Մ. Սեբաստացու անունը: Մ. Սեբաստացին այս եւ այլ գործերով, ինչպէս ասացինք, լատինաբանութեան դէմ իր դպրոցի պայքարի սկիզբը դրեց:

Մատենադէտ մանկավարժ-դիտնականը ամէն մի գրական գործ սկսելուց առաջ՝ հաշուի էր առնում ժամանակի հայ կրթութեան վիճակը եւ ընթերցողների պահանջը: Իր դրաբարի քերականութիւնը, որ լոյս է տեսել 1730 թուականին եւ որի վրայ սերունդներ են գրաբար սովորել, նա փակում է մի կարեւոր յաւելումով, որը չունեն իր նախորդները: Սեբաստացին ընթերցանութեան երեք կարգի նիւթ է առանձնացնում՝ «գիւրամարտելի» ամէնքին, միջին «գիւրամարտողութեամբ», եւ ոչ հասկնալի ամէնուց, այլ միայն՝ «գիտնոց»: Մ. Սեբաստացու լեզուաշինարարական աւանդները զարգացնում են նրա աշակերտները եւ ոչ միայն իր աշակերտները, այլ նրա ժամանակակիցներն ու յաջորդները՝ Պաղտատար Դպիրը, Յակոբ Նալեանը, Միքայէլ Չամչեանը եւ ուրիշներ գրում եւ տպագրում են դրաբար եւ աշխարհաբար քերականութեան նոր դասագրքեր, աշխարհաբար նամականի, զրոյցներ, բարոյա-կրթական ակնարկներ, բանաստեղծութիւններ, պատմութիւններ:

Ակադեմիկոս Գ. Զահուկեանը Մ. Սեբաստացուն գնահատում է իրրեւ առաջին լեզուաբանը հայ գրականութեան մէջ, որ իր լեզուաբանական, քերականական աշխատութիւնների մէջ դիմում է համեմատական մեթոդին: «Սեբաստացին ուշադրութիւն էր դարձնում հայերէնի եւ այլ լեզուների մի շարք այնպիսի ընդհանրութիւնների, որոնք փոխառութեամբ չեն կարող բացատրուել»¹²: Առաւել ուշադրաւ մի երեւոյթ: Գ. Զահուկեանը նկատում է 18րդ դարը ազգային քերականութիւնների առաջադիմութեան դար էր նաեւ վրաց ժողովրդի համար. «Անտոն կաթողիկոսի քերականութիւնը — գրում է նա — կառուցուած լինելով հայ քերական Մ. Սեբաստացու քերականութեան օրինակով, ազդում է հետագայ քերականութիւնների վրայ, մինչեւ 19րդ դարի երկրորդ կէսը»¹³: Պ. Մուրադեանն իր «Հայ-վրացական գրական փոխարարներութիւնը 18րդ դարում» աշխատութեան մէջ ցոյց է տալիս Անտոն կաթողիկոսի քերականութեան այն հատուածները, որոնք հեղինակի իսկ խոստովանութեամբ, քաղուած են Մ. Սեբաստացու դրաբարի քերականութիւնից»¹⁴:

Զարմանալի, անկախ համընթացութիւն այս հարցում: Նոյն այդ դարում է, որ ուսումնական, հանրագէտ Լոմոնոսովը իր ծրա-

12. Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՈՒԲԱՆՈՒԹԻՒՆ, ԵՐԵՎԱՆ 1965, էջ 197:

13. Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԿԱՏՈՒՆՈՒԹԻՒՆ, ԵՐԵՎԱՆ 1960, էջ 200:

14. П. МУРАДЯН, Армяно-Грузинские литературные взаимоотношения, Ереван, 1968, стр. 45.

գրային գործունեության մեջ վերափոխում է ուսուցիչականության եւ լեզուի դարգացման ուղին: Լոմոնոսովը նույնպէս մաքրում է ուսուցիչական դասական լեզուն կիսասլաւոնական, կիսալատինական ձեւերից, կենդանացնում է գրական աշխարհաբարը, գրում է ուսերէն նոր քերականութիւն եւ նրա ուսուցիչնարարութեան գործը շարունակում են իր յաջորդները, յատկապէս Կարամզինը:

* * *

Հայ դասական, նոր թատրոնի պատմութիւնը եւս սկզբնապէս կապւում է Մխիթարեան Միաբանութեան եւ անձամբ Մ. Սեբաստացու գործունեութեան հետ: Բարսեղ Վ. Սարգիսեանն իր «Ներկուհարիւրամեայ գործունեութիւն Մխիթարեան Միաբանութեան» աշխատութեան մէջ, 1760 թուականի տարուայ համար առաջ է բերում հետեւեալ յիշատակագրութիւնը. «Ի բարեկենդանին տարւոյս նորընծայք ոչ խաղացին ինչ խաղ առաջի հասարակութեան, ոչ մեծ եւ ոչ փոքր, վասնզի ձախորդ դէպք մը հանդիպած էր աղգին»: Իր ձեռքի տակ չունենալով որոշակի այլ փաստեր, Բ. Սարգիսեանը նշում է, որ «1774 թուականէն առաջ ներկայացումներ կարելի չեղան ինձ գտնել վանաց դիւանի մէջ՝ 1889 թուականին Ս. Ղազար պատահած հրդեհին ժամանակ թղթերը խառնուած լինելու պատճառով»¹⁵: Հետագայում՝ Մ. Վ. Ճանաչեանը վանքի դիւանում կատարած իր պլըպլուտումների ժամանակ, հանդիպում է 1753 թուականին գրած թատերական մի գործի սեւագիր օրինակի¹⁶: Բոլորովին վերջերս Մխիթարեան երիտասարդ միաբան Հ. Լ. Չէքիեանը նորագիւտ փաստերով տեղաշարժում է Մխիթարեան թատրոնի պատմութիւնը, հասցընելով այն 1730 թուականը: Այս եզրակացութեան համար նա հիմք է ընդունում Մ. Ղազարի դիւանատանը երեւան բերուած երկու նոր ժամանակագրութիւններ: Առաջինը սկսւում է 1724-ից եւ հասնում 1745 թուականը, իսկ երկրորդը՝ 1724-1749ին: Ըստ երեւոյթին նրկատում է Հ. Լ. Չէքիեանը, ժամանակագիրները սովորութիւն են ունեցել թատերական ներկայացումների վերաբերեալ տեղեկութիւններ յայտնել միմյն այլ, արտակարգ դէպքերի առիթներով: Այսպէս օրինակ, ընդարձակ ժամանակագրութեան հեղինակ Իգնատիոս Խաչատրեանը յայտնում է. «Յայտ ամի (1747 թուական) յաւուրս բարեկենդանի ոչ արարաք խնջոյս ուրախութեան, եւ ոչ խաղս, որպէս

15. Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Երկհարիւրամեայ գրական գործունեութիւն վանքի Մխիթարեան Միաբանութեան, Վենետիկ 1905, էջ 187:

16. Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ, Պատմութիւն արդի հայ գրականութեան, հտ. Ա, Վենետիկ 1953, էջ 296:

սովոր էր մեզ առնել յամենայն ամի ի նորընծայարանի, վասն հիւանդութեան Աբրահամ»: Կամ «Յայտ ամի գրում են երկու ժամանակագիրները եւս 1730 թուականի վերաբերեալ — սկսան նորընծայքն ի չորս աւուրս բարեկենդանին խաղալ զգարմանալի խաղսն զայնուսիկ, որք գրեալ կան ի թուղթսն խաղից: Եւ ի վերջին աւուրն գտաւ առաջիկայ Տէր Պետրոսն, որ եկեալ էր ի Բասենայ ի Լիզոնայ եւ անտի վէնէտիկ»¹⁷: Այս վերջին փաստից, ինչպէս նաեւ Մ. Սեբաստացու կողմից 1724-1732 թուականների ընթացքում նորընծայարանի եւ վարժարանի շինութեան եւ շահագործման աշխատանքների հետ կապուած այլ փաստերից ելնելով՝ Հ. Լ. Չէքիեանը 1730 թուականը անվերապահօրէն համարում է Մխիթարեան թատրոնի սկզբնաւորման տարի:

Արդ, ի՞նչ պիեսներ են բեմադրուել ըստ այդ ժամանակագրութիւնների: Հ. Լ. Չէքիեանը մեզ հաղորդում է նաեւ բեմադրուած մի շարք պիեսների անուններ. «Սաղ հիւանդին», «Բաղամ եւ Բաղ», «Սաղ ճգնաւորին», «Նահատակութիւն երանելի տէր Կոմիտասայ» եւ այլն: Այս վերջինս բեմադրուել է 1742, 1744 թուականներին եւ հետագայում եւս: Սակայն կարելի է մտածել, որ այդ պիեսը կարող էր գրուած լինել 18րդ դարի առաջին տասնամեակներում, կամ հենց էր գրուած լինել 18րդ դարի առաջին տասնամեակներում, կամ հենց էր գրուած լինել 18րդ դարի առաջին տասնամեակներում: Քանի որ հերոսի նահատակութեան տարուայ մէջ՝ 1707 թուականին: Քանի որ սովորաբար նոր նահատակներին նուիրուած երգերը մեծ մասամբ յօրինւում են հերոսի նահատակութեան օրերին կամ մօտ ժամանակներում: Կարելի է մտածել նաեւ, որ Մ. Սեբաստացին, որ անձամբ ճանաչում էր Կոմիտասին եւ որի նահատակութեան լուրը ցնցել էր ողջ Արեւմտահայաստանը, կարող էր մի այդպիսի պիեսի ստեղծմանն ողջ Արեւմտահայաստանը, կարող էր մի այդպիսի պիեսի ստեղծմանն ողջ Արեւմտահայաստանը նպաստել իր թատրոնի հենց հիմնադրման օրերին: Նորայայտ ժամանակագրութիւններում չկան տեղեկութիւններ նաեւ բեմադրուած պիեսների բովանդակութեան վերաբերեալ:

Որպէսզի փոքր ինչ գաղափար կազմենք Մխիթարեան թատրոնի սկզբնական ուղղութեան մասին, ծանօթանանք բեմադրութիւններից մէկի՝ «Նահատակութիւն երանելի տէր Կոմիտասայ» պիեսի հերոսի հետ՝ իր իսկ յօրինած բանաստեղծութեամբ: Կոմիտասը այն դրել է 1706 թուականին, նահատակութիւնից ամիսներ առաջ: Այդ բանաստեղծութեան մէջ ցոլանում է թէ՛ ժամանակը, եւ թէ՛ նահատակի՝ դարասկզբի նշանաւոր եկեղեցական գործիչ, բանաստեղծ եւ մատենագիր Կոմիտաս Քեօմիւրճեանի պատկերը:

17. Հ. Լ. ՉԵՔԻԵԱՆ, Հայ թատրոնի սկզբնաւորները եւ հայ վերածնունդի շարժումը, Վենետիկ 1975, էջ 17-18:

Կողկողազին դիմօք զազդն իմ աւաղեմ,
Եւ փղձկեալ ի սրտէս լալով արտասուեմ,
Ձաղնուականութիւն զազդին իմ յիշեմ
Եւ ոչ հանդուրժեալ սրտիս՝ լալով արտասուեմ:

Արդ՝ ո՞ւր են մեր իշխանք կամ ո՞ւր երեւին,
Ո՞ւր նոցա տէրութիւնքն, որք ոչ երեւին,
Քանզի թողին զմեզ որք եւ լալազին.
Վասն այնու ողբամ եւ յորդ արտասուեմ:

Ձարթի՛ր, Երեմիա եւ ողբս յօրինէ,
Դառն արտասուօք եւ զմեզ աւաղէ,
Ձի կորովի ազդ մեր ողբոց արժան է.
Վասն այնու ողբամ եւ յորդ արտասուեմ:

Ա՛ռ ընդ քեզ ողբակից մեր խորենացին,
Լեր լալակից նմա, ողբովք դառնազին,
— Աւա՛ղ, ափսոս կարդա մեր հայոց ազգին.
Վասն այնու ողբամ եւ յորդ արտասուեմ...

Քանզի բարձաւ ի մէջ խաղաղութիւն,
Ոչ գտանի ի մեզ խոհեմ, իմաստուն,
Ոչ այր խորհրդական, եւ ոչ ծեր, մեծատուն.
Վասն այնու ողբամ եւ յորդ արտասուեմ...

Տգէտք, տմարդիք քահանայացան,
Լիրբք, անբարտաւանք՝ զկարգ ստացան,
Առաքելոցն՝ ի սպառ մոռացան.
Վասն այսու ողբամ եւ յորդ արտասուեմ:

Աւա՛ղ ժամանակիս, որ ժամանեցաք,
Եւ ափսոս մեր ազգին, որ այսպէս տեսաք,
Քանզի այսօր հողմոյ հաւասարեցաք.
Վասն այսու ողբամ եւ յորդ արտասուեմ...

Չոմանս ի բանտ մատնեն եւ տանջեն,
Չոմանս բրածեծ առնեն, զոմանս կաշառեն,
Եւ զոմանս բռնութեամբ հաւատոյ հանեն.
Վասն այնու ողբամ եւ յորդ արտասուեմ¹⁸:

18. Բանաստեղծութիւնը 24 տուն է:

Մխիթարեան թատրոնի շուրջ եղած նորագիւտ փաստերի մէջ ուշադրաւ է նաեւ 1753 թուականի պիեսների մի ժողովածու, որի մէջ տեղ է գտել աշխարհաբար թատերախաղի մի տեսիլը: Անխորադիր եւ անհեղինակ այս պիեսի գործողութիւնների նկարագրութիւնը եւ հեղինակի միջամտութիւնները գրուած են գրաբար լեզուով, իսկ բուն պիեսը՝ աշխարհաբար: «Այսպէսով, 55 տարի կը կանխենք՝ դրում է Հ. Լ. Ջէքիեանը՝ Սարգիսեանի կողմէ յիշուած առաջին աշխարհաբար կատակերգութիւնը, «Անհաւատ սառաֆի նենգասիրութիւնը»¹⁹: Աշխարհաբար լեզուով թատերական ներկայացումներ կազմակերպելու հարցը բխում է Մ. Սեբաստացու գրական-լուսաւորական ծրագրերից եւ բնաւ վէճի առարկայ չի կարող լինել: Մնում է սպասել նոր փաստերի յայտնութեանը:

Այստեղ յիշենք նաեւ, որ Վենետիկում նոյն ժամանակներում ապրող հայազգի հռչակաւոր երգիծաբան գրող, դրամատուրգ Վե Բանաստեղծ Ջաքարիա Շեհրիմանեանը Վենետիկի զանազան թատրոններում բարեկենդանին բեմադրելու համար յատուկ պատուէրներով պիեսներ էր դրում: 18րդ դարում իտալական կեանքում նոյնպէս ուշադրութեան առարկայ էր դասական իտալերէնի հետ միասին ժողովրդական լեզուով պիեսներ վեր հանելու խնդիրը: Մ. Սեբաստացուն, որ մտերմական կապերի մէջ էր Շեհրիմանեանի տոհմի հետ, չէր կարող չմտածել, որ նման թատրոնի դերը մեծ է նաեւ հայութեան համար: Նորագիւտ այս փաստերը թոյլ են տալիս ասելու, որ 18րդ դարի դեռեւս 20ական թուականների վերջերից սկիզբ է առնում Մխիթարեան թատրոնը, որով, ինչպէս յայտնի է, խթանում է հայկական թատրոնի հետագայ զարգացումը:

* * *

Մ. Սեբաստացին ծաւալում է գիտա-մանկավարժական լայնահուն գործունէութիւն: Իր աշխարհաբար եւ գրաբար քերականութիւնները, «Աստուածաշունչը» եւ «Հայկազեան բառարանը» հրապարակ հանելու աշխատանքներին զուգահեռ՝ նա պատրաստում է նաեւ երաժշտութեան, ճարտասանութեան, մաթեմատիկայի եւ այլ առարկաների ուսուցման ձեռնարկներ, նպաստում է գիտութեան եւ արուեստի առանձին ճիւղերի, ինչպէս նաեւ քնարական եւ գիտաուսուցողական բանաստեղծութեան զարգացմանը:

«Բառալիրք Հայկազեան լեզուի» առաջին հատորը բացում է «Յորդորակ, առ ի կարդ իմաստից ուսման» չափածոյ երկով, ուր կուրկերպարանք են ստացել Մ. Սեբաստացու բառարանագիտութեան

19. Հ. Լ. ԵՒՆՈՆ ԶԵՔԻԵԱՆ, ամդ, էջ 20:

սկզբունքները: Այդ քանաստեղծութեան հեղինակը Մ. Սեբաստացու աշակերտ եւ օգնական Հ. Մկրտիչ Անանեանն է:

Զբաղվիր զնա սսեմ, հայոց ազգին,
Ում պէտք կարեացն էր սաստկազին,
Բայց ոչ ըստեղծ այսչափ դարին,
Մինչեւ ազգեաց հօր մեր վեհին
Կազմել զայն գործ ձեռամբ անձին,
Գործք իմաստից մի սընասցին,
Որով եւ տենչք հայոց լցցին²⁰:

Գիտութիւնը, արուեստը կանոնաւորապէս ուսման ընթացքի մէջ առնելու, մատչելի լեզուով արձակ եւ չափածոյ եղանակներով բանաստեղծութիւններ, գրքեր, աշխարհաբար եւ գրաբար դասագրքեր ստեղծելու գործը միասնաբար առաջ են վարում Մ. Սեբաստացին եւ Խ. Էրզրումեցին: Մ. Սեբաստացին պատրաստում է ուսումնական դասագրքեր, իսկ Խ. Էրզրումեցին աւելի լայն ընդգրկումներով, մեծ մասամբ ոտանաւոր եղանակով, հրատարակում է հանրագիտական, արուեստագիտական բնոյթի մեծածաւալ գրքեր՝ «Համառոտական իմաստասիրութիւն», «Բարոյական աստուածաբանութիւն», «Ճարտասանութիւն» եւ այլն:

Մ. Սեբաստացին եւ Խ. Էրզրումեցին իրենց գործերով դեռեւս դարասկզբում սաղմնաւորում են հայ դասական արուեստի ու գրականութեան զարգացման տեսական հիմքերը, հայկական կլասիցիզմի՝ կրօնա-ազգային (հետեւաբար նաեւ կրօնա-քաղաքական) գրական ուղղութեան հիմունքները: Կլասիցիզմի՝ իբրեւ գրական նոր ուղղութեան հիմնական պահանջն էր մշակութային գրական կեանքը դնել տեսական կանոնի, ծրագրային զարգացման հիմքերի վրայ: Այս եղանակով է գործել նաեւ Մ. Սեբաստացին եւ առհասարակ 18րդ դարի մշակութային ու քաղաքական շարժման քոյր առաջադէմ գործիչները:

«ԺԸ. դարու առաջին կէսը երեք մեծ անուններ կը լեցնեն հայ կեանքը. Իսրայէլ Օրի, Դաւիթ Բէկ եւ Մխիթար: Անոնցմէ առաջինը քաղաքական գետնի վրայ կը գործէր՝ հայոց հայրենիքը ազատագրելու համար. երկրորդը՝ զինուորական գետնի վրայ՝ կը պայքարէր, ձեռք բերելու համար քաղուկով այն՝ ինչ կարելի չէր խօսքով. իսկ Մխիթար ընտրած էր մշակոյթի դաշտը՝ նոյն նպատակներուն հասնելու համար»²¹: Այս միտքը փոքր ինչ այլ ձեւակերպումներով արտայայտում են նաեւ այլ գրականագէտներ: Դաւիթ Բէկի պատ-

20. Բազմիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ 1749, էջ 22:

21. Գ. Մեխիթարեան, Մխիթար Արքեպիսկոպոս եւ իր նպատակը հայ ժողովուրդին («Գեղունի» 1950, էջ 44):

մութեան բնագրի 1975 թուականի հրատարակիչ Մ. Վրդ. Արամեանը մեծ խորհուրդ է տեսնում Փարայէլ Օրու 1701 թուականի Եւրոպա մեկնելու եւ նոյն թուականին Մ. Սեբաստացու կողմից իր Միաբանութիւնը հիմնադրելու փաստերի զուգահեռութեան մէջ²²: Մ. Վ. Արամեանի ձեռքի տակ եղած նիւթերի համաձայն, Մխիթարեանները իրենց ժամանակին մշտական տեղեկութիւններ են ստացել Դաւիթ Բէկի կողմից ընթացքի վերաբերեալ, որոնք տարակուսանքից վեր են դարձնում Մխիթարեանների՝ Դաւիթ Բէկի պայքարի նկատմամբ ունեցած հետաքրքրութիւնն ու նախանձախնդրութիւնը: Յայտնի է, որ Դաւիթ Բէկի մարտական գիտակից Ստեփանոս Շահումեանը, Սիւնիքի ապստամբութեան անյաջող ելքից յետոյ, մեկնում է Վենետիկ՝ այնտեղ գործող Շահումեանների առեւտրական տանն աշխատելու: Բնականաբար, այստեղ նա մտերմանում է Մխիթարեանների հետ: Յայտնի է, որ Ղուկաս վարդապետ Սեբաստացու գրչութեամբ է լոյս աշխարհ գալիս Ստեփանոս Շահումեանի «Դաւիթ Բէկի պատմութիւնը»: Հասկնալի է, որ անձամբ Մ. Սեբաստացու յանձնարարութեամբ միայն Ղուկաս վարդապետը կարող էր մի այդպիսի ծառայութիւն մատուցել ազգին եւ Ստեփանոս Շահումեանին: Մխիթար Սեբաստացու եւ Մ. Շահումեանի մտերմական յարաբերութեան մասին կան նաեւ այլ փաստեր: Նրանք միասին 1736 թուականին զբաղւում են Մ. Ղազարի վանքի ներքին բարեկարգութեան հարցով: Ստ. Շահումեանը իր նիւթական միջոցներով կառուցում է եկեղեցու Գրիգոր Լուսաւորչի անունան ճոխ խորանը եւ նրա առջեւ պատրաստել տալիս իր մարմարեայ դամբարանը՝ համապատասխան արձանագրութեամբ:

* * *

Մ. Սեբաստացու գործունէութիւնը նպաստել է հայագիտութեան բուն զարգացմանը, 18րդ դարի հայ մշակութային կեանքի տեղաշարժին, առաջադիմութեանը, վերանորոգութեանը: Մ. Սեբաստացի մատենագէտն ու բնագրագէտը, բառարանագէտն ու լեզուագէտը, երգահանն ու բանաստեղծը, ուսուցիչն ու մանկավարժը, Եւրոպայում առաջին եւ մշտնջենաւոր հայագիտական մեծ դպրոցի հիմնադիրը այժմ աւելի քան երբեք, արժանի է յատուկ ուշադրութեան:

Երեւան

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ

Բանասիրական գիտութիւնների Դոկտոր

22. ԺԵ. եւ ԺԸ. դարերու հայ ազատագրական շարժումը («Բազմավեպ» 1975, Թ. 1-2, էջ 83):